ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/116

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Լիմուշ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Ս. Մարկոսյանի, Տ. Հովհաննիսյանի, Ա. Սահակյանի
Մասնակից՝ «Լիմուշ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Դարբինյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցում, տնտեսական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.07.2019թ. թիվ 26/26-1/11640-2019 գրությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի 17.06.2019թ. թիվ 03/149 և 08.07.2019թ. թիվ 03/173 գրությունների հիման վրա, 11.07.2019թ.-ին «Լիմուշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 11.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 19.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 19.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.08.2019թ.-ին:

2. Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ը 17.06.2019թ. թիվ 03/149 և 08.07.2019թ. թիվ 03/173 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Սպասարկում» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ձևով տնտեսական ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 15-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած «Լիմուշ» ՍՊԸ-ն 3 աշխատաքային օրվա ընթացքում չի ներկայացրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը, որի արդյունքում, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժել է «Լիմուշ»

ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լիմուշ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Լիմուշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Լիմուշ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2019թ. թիվ 26/26-1/11640-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք, սակայն ներկայանալով նիստին բանավոր կերպով հայտնել է, որ ստացել են Պատվիրատուի կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցումը, սակայն պահանջված փաստաթղթերը չի ներկայացվել, քանի որ «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում՝ 15-րդ չափաբաժնի մասով սխալ է նշվել ապրանքի համար նախատեսված գումարը:

4. <u>ՍՑ-LO-2019/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 13.05.2019թ.-ին հայտարարվել է «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Լիմուշ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին

հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չաւիաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չաւիաբաժնում (չաւիաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով «Լիմուշ» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.05.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լիմուշ» ՍՊԸ-ն ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին՝ պահանջելով ներկայացնել հրավերով սահմանված որալավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից, 31.05.2019թ.-ին առաջին տեղ զբաղեցնող բոլոր մասնակիցների՝ այդ թվում նաև «Լիմուշ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում:

Հանձնաժողովի 04.06.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մասնակիցները օրենքով սահմանված կարգով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել են հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը՝ բացառությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ից, ուստի Հանձնաժողովը որոշել է 15-րդ չափաբաժնի մասով մերժել Մասնակցի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2019թ թիվ 26/26-1/11640-2019 գրությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝

հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ընդհանրապես չեն ներկայացվում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ապա տվյալ դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.05.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լիմուշ» ՍՊԸ-ն ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից, 31.05.2019թ.-ին առաջին տեղ զբաղեցնող բոլոր մասնակիցների՝ այդ թվում նաև «Լիմուշ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ պահանջելով ներկայացնել հրավերով սահմանված որալավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 04.06.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացվել հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը, ուստի Հանձնաժողովը որոշել է 15-րդ չափաբաժնի մասով մերժել Մասնակցի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լիմուշ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չներկայացնելով հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2019թ թիվ 26/26-1/11640-2019 գրությամբ «Լիմուշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լիմուշ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**